




Արտակարգ երևույթ Սիդնեյում



Օգոնային շերտը կվերականգնվի



Օգնի՛ր տուժածին



Հանձարն ունի իր ախտանիշները

ISSN 1829-149X 0 9 0 3 4
9 771829 149003

ով իրազեկված է, նա տաշտոանված է

արտակարգ թերթ

N 34 (307) 25.9.2009 - 01.10.2009 www.emergency.am

Օրվա հերոսները

Անկախության օրվա խորհուրդը ԱԻՆ-ում



Սեպտեմբերի 22-ին ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության խորհրդակցությունների սրահում իսկական տոնական մթնոլորտ էր. օդում սավառնում էր անկախության ոգին, եւ դահլիճում գտնվող ԱԻ նախարարության ու ՅԾՖ ղեկավար աշխատակիցները կանխավայելում էին «արտակարգ» շնորհավորանքը:

Շնորհավորելով ներկաներին Անկախության օրվա կապակցությամբ, Արտակարգ իրավիճակների նախարար Միեր Շահգեղյանն ու ԱԻՆ առաջին տեղակալ, Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը պատվոգրեր ու շնորհակալագրեր հանձնեցին համակարգի աշխատակիցներին: Փրկարարական ծառայության վաղաժամկետ կոչումներ ստացած սպաները մեծ հոգով, որ դա իրենց ակնկալած լավագույն նվերն է:



Հայ փրկարարները Ղազախստանում

Այս տարվա սեպտեմբերի 4-ից 10-ը Ղազախստանում անցկացվեց «ժեռիսյու 2009» ուսումնառարկությունը ՆԱՏՕ-ի ԵԱԳԽ շրջանակներում, որին մասնակցեցին նաև հայ փրկարարները՝ հատուկ փրկարարական ջոկատի 11 հոգուց բաղկացած խմբով: ՀՀ ԱԻՆ ՅԾՖ տնօրենի տեղակալ փ/ծ գեղապետ Ա. Ազարյանը միջոցառմանը մասնակցել է դիտորդի կարգավիճակով, փ/ծ գեղապետ Հ. Եմիշյանը ուսումնառարկության ընթացքում աշխատել է ղեկավարման շտաբում, իսկ փ/ծ փոխգեղապետ Ա. Դավթյանը՝ տարածքի օպերատիվ համակարգման կենտրոնում (OSOCC):



Իսկ ընդհանուր առմամբ «ժեռիսյու 2009»-ին մասնակցում էին ներկայացուցիչներ 20 երկրներից (Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բուլղարիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռուսաստանի Դաշնություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Տաջիկստան, Թուրքմենիստան, Մակեդոնիա, Թուրքիա, Անգոլա, Ուկրաինա): 21 ներկայացուցիչ աշխատել է ղեկավարման շտաբում, 12-ը՝ տեղամասի օպերատիվ համակարգման շտաբում (OSOCC), 14-ը՝ գնահատման խմբում եւ 24 հոգի էլ որպես դիտորդ էր ներկայացել:

Ուսումնառարկության ընթացքում մեր ներկայացուցիչները ակտիվորեն աշխատել են ինչպես ղեկավարման շտաբում, այնպես էլ OSOCC-ում:

Հայկական փրկարարական խումբը աշխատել է փլուզման գոտում, տրանսպորտային վթարի վայրում եւ լեռներում, որի ընթացքում նրանք համագործակցել են աշխատանքներում ներգրված այլ փրկարարական խմբերի հետ:

Հայկական փրկարարական խմբի կատարած աշխատանքներն արժանացել են բարձր գնահատականի:

ՀՀ ԱԻՆ ՅԾՖ-ը մասնակցել է ուսումնառարկությանը նաև որպես վիրտուալ մասնակից՝ աշխատելով ինտերնետային համապատասխան կայքում:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյմսիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ծիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք 1-01, 1-12

Հայրենաբերվել է դիակ

Սեպտեմբերի 17-ին, ժամը 13.14-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ջավարյան քիվ 57/19 շենքի թիվ 35 բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան ու հեռախոսի զանգերին եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Ահազանգի մասին տեղյակ են պահվել նաեւ ոստիկանությունն ու շտապօգնության ծառայությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բացել են նշված բնակարանի մուտքի դուռը, որտեղ հայտնաբերվել է դիակ, եւ այն դուրս բերելու համար անհրաժեշտ է

Դիակ Աղսրեւ գետում

Սեպտեմբերի 18-ին, ժամը 14.40-ին Իջեւան քաղաքի ոստիկանությունից ստացված ահազանգի համաձայն՝ Աղսրեւ գետում (Իջեւանի «Կար-Արտ» գործարանի մերձակայքում) հայտնաբերվել է դիակ, եւ այն դուրս բերելու համար անհրաժեշտ է

փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները գետից դուրս են բերել Երեւանի բնակչուհի, 1931 թ. ծնված Էլմիրա Վարդանյանի դիակ եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Տանը՝ միայնակ

Սեպտեմբերի 20-ին, ժամը 10.45-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Իսակովի պողոտայի 42/2 շենքի թիվ 59 բնակարանի դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1934 թ. ծնված Հասմիկ Ենգիբարյանի դիակ:

Գայլերի հարձակում

Արագածոտնի մարզի Ավշեն համայնքից ստացված տեղեկության համաձայն՝ սեպտեմբերի 22-ին, ժամը 05.00-ին գայլերի ունակը հոշոտել է նույն համայնքի բնակիչ Իսո Շանդինյանին պատկանող 16 գլուխ ոչխարը:

Վնասներ կարկտից

Սեպտեմբերի 22-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.40-ից մինչեւ 15.20-ը տեղացած ուժեղ կարկուտը մեծ վնաս է պատճառել Երնջատափի համայնքի գյուղատնտեսական մշակաբույսերին:

Գյուղատնտեսական ստեղծվել է հանձնաժողով՝ վնասի չափը ճշտելու նպատակով:

Նույն օրը, ժամը 18.00-ի սահմաններում Տավուշի մարզում տեղացած ուժեղ կարկուտը վնասել է Ակնաղբյուր, Այգեհովիտ, Վազաշեն եւ Դիտավան համայնքների խաղողի այգիները, ցանկապատերը:

Գյուղատնտեսականներում ստեղծվել են հանձնաժողովներ՝ վնասի չափերը ճշտելու նպատակով:

Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ սեպտեմբերի 22-ին, ժամը 18.00-ի սահմաններում մարզում տեղացած կարճատև կարկտի հետեւանքով վնասվել են Ազնվածոր գյուղի 38 տան տնամերձ հողամասեր, ինչպես նաեւ հացահատիկի եւ բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքատարածքներ՝ 15 հա ընդհանուր մակերեսով:

Էլեկտրաքարշը հարվածել է կնոջը

Սեպտեմբերի 22-ին Լոռու մարզի «Հարավկովկասյան եր-



կաթուղի» ՓԲԸ-ի «Վանաձորի գծակայարանի միավորումից» ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 19.30-ի սահմաններում, Դարպաս գյուղի մոտակայքում պահեստային էլեկտրաքարշը հարվածել է Շնող գյուղի բնակչուհի, 1928 թ. ծնված Վար-

դուշ Բոշյանին: Տուժածը մարմնական տարբեր վնասվածքներով տեղափոխվել է Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր, որտեղ էլ ուշ երեկոյան մահացել է:

Բախվել են երկու բեռնադար

Սեպտեմբերի 19-ին, ժամը 01.35-ին Գեղարքունիքի մարզից ահազանգ է ստացվել, որ Գավառ-Սեւան ավտոճանապարհի 26-րդ կիլոմետրում՝ Չկալովկա գյուղի մոտ, տեղի է ունեցել ավտոպատահար, կամ տուժածներ եւ նրանց դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Տեղում պարզվել է, որ «Գազել» մակնիշի 18 OL 103 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենան (վարորդ՝ Գավառի Հացատուն թաղամասի բնակիչ, 1970թ. ծնված Գեղամ Կարապետյան) բախվել է «ԳԱԶ-52» մակնիշի առանց պետհամարանիշի բեռնատարին եւ շրջվել:

Պատահարի հետեւանքով «Գազել» մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր՝ Գավառի Ազատության փողոցի 43-րդ շենքի թիվ 45 բնակարանի բնակիչ, 1983 թ. ծնված Սարգիս Գասպարյանը տեղում մահացել է, իսկ վարորդ Գ. Կարապետյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել Սեւանի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Մեքենան բախվել է ծառին

Սեպտեմբերի 21-ին, ժամը 06.55-ին Գեղարքունիքի մարզից ահազանգ է ստացվել, որ Վարդե-

նիս-Շոփակ ավտոճանապարհի 9-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգանակներում՝ «Մերսեդես» մակնիշի 17 ՍՕ 069 պետհամարանիշի ավտոմեքենան ընթացքի ժամանակ դուրս է եկել ճանապարհի երթելակի մասից եւ բախվել ծառին, ինչի հետեւանքով վարորդ, 1964 թ. ծնված Է.Յովհաննիսյանը տեղում մահացել է: Ավտոմեքենայից տեղի է ունեցել զգալի արտահոսք:

Դեպքի վայր մեկնած փրկարարները կատարել են հովացման ու լվացման աշխատանքներ:

Շրջվել է մեքենա



Սեպտեմբերի 23-ին, ժամը 20.27-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Իջեւան ավտոճանապարհի 62-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգանակներում՝ շրջվել է «ԲՄՎ» մակնիշի 11 ՍՏ 789 պետհամարանիշի ավտոմեքենան:

>>> 3

միջազգային լուրեր

Պայթյուն Վորոնեժում

Վորոնեժում հրատեխնիկայի պահեստում սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած պայթյունի հետեւանքով 55 մարդ վիրավորվել է, մեկը՝ զոհվել: Այս մասին հայտարարել է ԱԻՆ Վորոնեժի շրջանի վարչության պետի պաշտոնակատար Իգոր Կորզեւը:



Տուժածները հիմնականում հարակից շենքերի բնակիչներ են: Վարչության տվյալներով 19 մարդ տեղափոխվել է հիվանդանոց, որոնցից 4-ը գտնվում են վերակենդանացման բաժանմունքում: Վիրավորներից 2-ի վիճակը բժիշկները ծանր են գնահատում:

Ջրհեղեղ ԱՄՆ-ում

«Անոշիեթիդ պրես» գործակալությունը հաղորդում է, որ ԱՄՆ-ի հարավ-արեւելքում տեղի ունե-



ցած ջրհեղեղի հետեւանքով զոհվել է վեց մարդ՝ այդ թվում երկու տարեկան մի երեխա: Եւ երկու մարդ համարվում է անհայտ կորած: Ջրհեղեղի պատճառ դարձած հորդառատ անձրեւները սկսել են մոտ մեկ շաբաթ առաջ Ջորջիա եւ Թենեսի նահանգներում:

Ստեղծված իրավիճակի հետ կապված՝ Ջորջիայի նահանգապետը 17 շրջաններում արտակարգ դրություն է հայտարարել:

Արտակարգ երեւոյթ Սիդնեյում

Ավստրալիայի ամենամեծ քաղաքը՝ Սիդնեյը կարմիր փոշու մեջ է: Այդ փոշին քամին բերել է մայր-

ցանքի անապատային գոտուց, հայտնում է BBC-ին:

Քաղաքում տեսանելիության մակարդակն այնքան է վատացել, որ Սիդնեյի միջազգային օդանավակայանում չեղյալ են համարվել բոլոր չվերթները, անորոշ ժամանակով հետաձգվել է նաեւ նավերի երթելակները:



Բնակչության մոտ շնչառական խնդիրների աճ է գրանցվել: Տարեցներին եւ երեխաներին հորդորել են մնալ տանը: Փոշուց պաշտպանվելու համար փողոցներում մարդիկ դիմակներ են կրում:

Սիդնեյի բնակիչների խոսքերով, նրանք երբեիցե նման հրաշքի ակամատես չեն եղել, փոշու կարմիր գույնն ապշեցնում է:

Ռուսաստանում դպրոց է փակվել խոզի գրիպի պարճառով



Ռուսաստանի Դաշնության Մուրմանսկ քաղաքում դպրոց է փակվել: Դպրոցի 17 աշակերտների մոտ կասկածում են A/H1N1 վիրուսի առկայություն (խոզի գրիպ): Այդ մասին հայտարարել է ՌԴ զլխավոր սանիտարական բժիշկ Գեմադի Օնիշենկոն, տեղեկացնում է «Ինտերֆաքս»-ը: Դպրոցում սովորում է 484 երեխա:

Ըստ Օնիշենկոյի, 16 երեխա վարակվել է 3-րդ դասարանցի մի երեխայից, որը վերջերս է վերադարձել Թուրքիայից: Բժիշկն ասել է, որ այժմ բոլոր վարակված երեխաներն իրենց նորմալ են զգում: Նրա խոսքով, իրավիճակը ծանր հետեւանքներ չի ունենա:

ԱՄԿ վերջին վիճակագրության համաձայն, աշխարհում այդ գրիպով վարակվածների թիվն անցնում է 308 հազարը: Սեպտեմբերի

21-ի դրությամբ Ռուսաստանում գրանցվել է հիվանդության 381 դեպք:

Կալիֆոռնիայում կրկին հրդեհ է

Նախօրեին Կալիֆոռնիայում հրդեհի նոր օջախ է բռնկվել: Այս անգամ Վենտուրա շրջանում, որտեղ հայտարարվել է մասնակի տարահանում:



Հրդեհի մակերեսը կազմում է 2.4 հազար հա: Ամերիկյան լրատվամիջոցների հաղորդմամբ, հրդեհների արագ տարածմանը նպաստում են ուժեղ քամիները, շոգն ու խոնավության պակասը:

Եթե չհաջողվի հրդեհը տեղայնացնել, ապա Մուրալսկ քաղաքի հյուսիս-արեւմտյան մասին լուրջ վտանգ կսպառնա: Վենտուրայում հրդեհի դեմ պայքարում է մի քանի հարյուր հրշեջ: Հրդեհի մարման աշխատանքներում ներգրավված է նաեւ հատուկ օդային տեխնիկա:

Գարրի Կասպարով

արագ արձագանքման ծառայություններ



<<< 2 Մինչ հրշեջ-փրկարարների դեպքի վայր հասնելը՝ ավտոմեքենայի վարորդ, Կոտայքի մարզի Կոտայք գյուղի բնակիչ, 1969 թ. ծնված Վարդան Գարությունյանը տեղի ուժերով դուրս է բերվել ավտոմեքենայից:

Տուժածը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Հրշեջ-փրկարարներն իրականացրել են ավտոմեքենայի շարժիչի հովացման և ասֆալտի վացման աշխատանքներ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 20 դեպք

Հրդեհ խանութում



Սեպտեմբերի 17-ին, ժամը 16.25-ին հրդեհ է բռնկվել Շիրակի մարզում՝ Գյումրիում գտնվող «Մոնիկա» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է տեղի ուժերով:

Մ. Հովհաննիսյանին պատկանող սուպերմարկետի պահեստային մասում այրվել է գազի 3 կգ-անոց բալոն:

Հրդեհ ասֆալտի արտադրամասում

Սեպտեմբերի 18-ին, ժամը 07.25-ին հրդեհ է բռնկվել Արագածոտնի մարզի Օշական գյուղում գտնվող «Աշտարակչին» ԲԲԸ-ին պատկանող ասֆալտի արտադրամասում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 08.15-ին, մարվել՝ 08.55-ին:

Այրվել է 2 տոննա ձյուր:

Հրդեհ Արեւշատ գյուղում

Սեպտեմբերի 20-ին, ժամը 18.25-ին հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Արեւշատ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.05-ին, մարվել՝ 22.20-ին:

Այրվել են 4. Մանուկյանին պատկանող տան և անասնազոմի տանիքները՝ համապատասխանաբար 80 և 32 քմ մակերես:

ներով, ինչպես նաև պահեստավորված 2 տոննա խոտ և 3 տոննա ծղոտ:

Հրդեհ փանիքում

Սեպտեմբերի 23-ին, ժամը 16.44-ին Շիրակի մարզից ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Ախուրիկ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 17.13-ին, մարվել՝ 18.12-ին:

Այրվել է Ռ. Գեւորգյանին պատկանող ամանագոմի տանիքը՝ 100 քմ մակերեսով, և այնտեղ պահեստավորված 1 տոննա խոտը:

Հրդեհ ավտոբնակում

Սեպտեմբերի 24-ին, ժամը 03.01-ին Սյունիքի մարզից ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կապանի Հարությունյան փողոցի թիվ 10 շենքի մոտակայքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 03.15-ին, մարվել՝ 03.30-ին:

Այրվել են Ժ. Պետրոսյանին պատկանող ավտոտնակի փայտե կառուցվածքները՝ 3 քմ մակերեսով:

Գոհար Բաղդասարյան

սեյսմիկ կաշտպանություն

Ս. ք. սեպտեմբերի 17-ից 23-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ և ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ և ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել հինգ երկրաշարժ: Դրանցից երեքը գրանցվել են Թուրքիայի տարածքում: Սեպտեմբերի 18-ին, 19-ին և 21-ին, համապատասխանաբար քաղաք Մուշից 60 կմ, Հորասանից 12 կմ և Նարմանից 20 կմ դեպի հյուսիս-արևելք, տեղի է ունեցել 4-5, 4 և 3 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Հաջորդ երկու 3 բալանոց սեյսմիկ ցնցումները գրանցվել են սեպտեմբերի 20-ին և 21-ին, համապատասխանաբար Վրաստանի Դմանիսի քաղաքից 10 կմ դեպի հարավ-արևմուտք և Վրաստան-Ռուսաստան սահմանային գոտում, վրացական Քվարելի քա-

ղաքից 10 կմ դեպի հյուսիս-արևելք:

Տարածաշրջանից դուրս. 6 և ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ: Դրանցից երկուսը տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձև երե գոտում, առաջինը՝ 6.2 մագնիտուդով, գրանցվել է սեպտեմբերի 17-ին, երկրորդը՝ 6.0 մագնիտուդով, սեպտեմբերի 23-ին: Սեպտեմբերի 21-ին Բուքարեստում, Տաշիզանց քաղաքից 12 կմ դեպի հյուսիս-արևմուտք, տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6.3 մագնիտուդ: Երկրաշարժի հետևանքով զոհվել է առնվազն 10 մարդ, կան բազմաթիվ վիրավորներ, ավերվել են շենքեր և շինություններ: Ստորգետնյա ցնցումները զգացվել են նաև Հնդկաստանի և Բանգլադեշի տարածքներում:

ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Սեպտեմբերի 17-ից 23-ը դիտված հիդրոօդերեուսաբանական պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 18-ին, 19-ին և 23-ին առանձին շրջաններում, 17-ին և 20-ից 22-ը շրջանների մեծ մասում դիտվել է ամպրոպ և անձրև: 2-18 մմ քանակությամբ, տեղ-տեղ զգալի՝ 20-30 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում, Տավուշում և Սյունիքի հովիտներում՝ +20...+25°C, Արցախում, Լոռիում և Սյունիքի

նախալեռներում՝ +18...+23°C, լեռնային շրջաններում՝ +13...+18°C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ 0...+5°C, Լոռիում՝ +1...+6°C, Տավուշում և Սյունիքի նախալեռներում՝ +5...+10°C, Արարատյան դաշտում՝ +8...+13°C, Սյունիքի հովիտներում և Արցախում՝ +10...+15°C:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում սեպտեմբերի 25-ին և 26-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: 27-ին, 28-ին և 29-ի գիշերն ամենուրեք, իսկ 29-ի ցերեկը՝ արևելյան շրջաններում սպասվում են տեղումներ, 28-ին՝ տեղ-տեղ զգալի: Քամին հյուսիսարևելյան՝ 2-7մ/վրկ, 27-ին ուժգնացում՝ 15-20մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 25-ին և 26-ին կբարձրանա 2-ից 4 աստիճանով, 27-ի և 28-ի ցերեկը աստիճանաբար կնվազի 8-ից 10, իսկ 29-ի ցերեկը կբարձրանա 3-5 աստիճանով:



Ջրի հետքեր Լուսնի վրա



Լուսնի մակերեսի գրունտային վերին շերտում ջրի հետքեր են հայտնաբերվել: Այդ մասին երեկ ՆԱՍԱ-ում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել են ամերիկացի գիտնականները: Ըստ գիտնականների, այդ փաստի համոզիչ ապացույցներ են ստացվել սպեկտրոգրաֆիկական տվյալների հետազոտությունների արդյունքում: Այդ տվյալները փոխանցել են երեք տարբեր հետազոտող արբանյակներ՝ տարբեր տարիների:

Ինչպես մանրամասնել է Բրաունի համալսարանի գիտնական Քարլա Պիթերսը, խոսքը ջրամբարների մասին չէ: Լուսնի վրայի ջուրը բաղկացած է ջրածնի և թթվածնի մեկական ատոմներից՝ ջրածնի երկու ատոմի փոխարեն, ինչպես ջրի մեջ է, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Այդ մոլեկուլները փոխազդում են քարերի ու փոշու հետ՝ հատկապես Լուսնի գրունտի վերին շերտի մի քանի միլիմետրում:

Գիտնականների ներկայացմամբ, ուսումնասիրվել են հնդկական «Չանդրայան -1» արբանյակից ստացված տվյալները, որն իր աշխատանքները Լուսնի ուղեծրում ավարտել է օգոստոսի վերջին, հաղորդում է «Թայմսը»:

Այդ տվյալների համաձայն, ջուրը Լուսնի վրա շարունակում է ձևավորվել: Գիտնականները պնդում են, որ այդ բացահայտումը Լուսնի ուսումնասիրման պատմության մեջ իսկական ճեղքում է: Բանգալորում տեղակայված Հնդկական տիեզերական առաքելության ղեկավար դոկտոր Միլսվամի Աննեդերը իր գոհունակությունն է հայտնել բացահայտման կապակցությամբ: Նրա խոսքերով, տիեզերական առաքելության հիմնական նպատակը հենց Լուսնի վրա ջրի փնտրտուքն էր, բայց հետազոտության արդյունքներն ապշեցրել են հնդիկ մասնագետներին:

Ինչպես մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողներին հայտնել է Մերիլենդի համալսարանի աստղագետ Ջեսիկա Սանջայնը, վերլուծվել են նաև ամերիկյան «Դեփ իմփաք» զոնդի տրամադրած տվյալները: Այն հունիսին հերթական շրջանն էր կատարել Երկրի և Լուսնի շուրջը՝ դեպի «Հարթլեյ-2» գիսավորն ու միջմոլորակային «Կասինի» կայան ուղեւորվելու ճանապարհին: Այդ կայանն այժմ պտտվում է Սատուրնի շուրջը, բայց տասը տարի առաջ այն թռչում էր Լուսնի կողքով և չափումներ իրականացնում: Այս բոլոր ապարատներն ունեցել են ինֆրակարմիր սպեկտրաչափեր, որոնք նույն արդյունքներն են գրանցել:

Հետազոտողները կարծում են, որ երեք տարբեր արբանյակների սարքավորումները չէին կարող սխալվել: Այդ պատճառով էլ վստահաբար կարելի է ասել, որ ջրի մոլեկուլներ այնտեղ կան: Գիտնականները, որոնք մինչ այդ ուսումնասիրել են Լուսնի գրունտը, նույնպես ջրի հետքեր են հայտնաբերել: Սակայն նրանք համարել են, որ հետազոտությունների արդյունքների վրա ազդել է Երկրի օդի խոնավությունը:

Մասնագետներն այժմ նաև ենթադրություններ են անում, թե որտեղից է Լուսնի վրա ջուր հայտնվել: Մի վարկածի համաձայն, այն բերել են գիսաստղերն ու երկնաքարերը, որոնք բախվել են Երկրի արբանյակի մակերեսին: Վարկած կա նաև, որ արեւային քամին ջրածնի ատոմներ է բերել, որոնք էլ գրունտի մեջ խառնվել են թթվածնի ատոմների հետ:

Օզոնային շերտը կվերականգնվի՞

Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրությունը միակն է, որին անդամակցում են աշխարհի բոլոր պետությունները: Դեռևս 1987 թ. սեպտեմբերի 16-ին 36 երկիր, ստորագրելով այս արձանագրության տակ, պայմանավորվեցին կրճատել, իսկ հետո էլ ամբողջությամբ դադարեցնել օզոն քայքայող նյութերի արտադրությունը:

Ռանցից երկու տարի առաջ՝ 1985 թ., աշխարհի բազմաթիվ երկրներ արդեն ստորագրել էին Վիեննայի կոնվենցիան, ըստ որի՝ անհրաժեշտ էր ձեռնարկել համապատասխան միջոցառումներ մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը մարդկային գործունեության այնպիսի ազդեցությունից պաշտպանելու համար, որը փոփոխում է կամ կարող է փոփոխել օզոնային շերտը: Առաջին անգամ ազգերը համաձայնության եկան գլոբալ տարածաշրջանային այնպիսի խնդրի դեմ պայքար տանելու վերաբերյալ, որը մինչ այդ դեռևս գիտականորեն չէր հաստատվել: Հետագայում գիտնականները ահազանգեցին Անտարկտիդայի հատվածում օզոնային շերտի սաստիկ քայքայման և անհասկալի միջոցներ ձեռնարկելու մասին: 1994 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հայտարարեց սեպտեմբերի 16-ը օզոնային շերտի պահպանության միջազգային օր: Օզոնային շերտի պահպանման խնդիրը, որը պաշտպանում է երկրի կենդանի օրգանիզմները ուղտամանուշակազույն ճառագայթների կործանիչ ազդեցությունից, համարվում է առաջնային բոլոր երկրների համար:

Անգլիացի մասնագետների տվյալների համաձայն՝ մոլորակի

վերնոլորտում օզոնային շերտի քայքայման գործընթացն անմիջականորեն կապված է արդյունաբերությունում և կենցաղում քլոր պարունակող քիմիական նյութերի օգտագործման հետ, որոնք լայն տարածում են գտել գյուղատնտեսությունում և ժողովրդական տնտեսության շատ այլ բնագավառներում: Օզոնային շերտի քայքայումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ երկրի կենդանական և բուսական աշխարհի վրա: Մարդկանց մոտ հաճախ առաջանում են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են կատարակտը, իմունային համակարգի վատթարացումը և մաշկի քաղցկեղը: Օզոն քայքայող նյութեր (ֆրեոններ) կան օդորակիչներում, կրակմարիչներում, սառնարաններում և այլ տեխնիկական սարքավորումներում: Ըստ բնագիտության թեկնածու Դավիթ Մելքոնյանի՝ տեխնիկական սարքավորումների վերանորոգման ժամանակ ֆրեոն գազերը արտանետվում են մթնոլորտ, որտեղ մնալով մի քանի տարի՝ քայքայում են օզոնային շերտը:

- Ֆրեոնները, արժանեցվելով մթնոլորտ, մոտ 20 տարի ընթացքում հասնում են օզոնային շերտին, որը գտնվում է 20-30 կմ բարձրության վրա, այնուհետև՝ կախված նյութի տեսակից, մնում են այնտեղ մինչև 100 տարի և այդ-

քան ժամանակ անընդհատ ֆայթում են օզոնը:

Մասնագետը նշում է, որ օզոնային շերտը այսօր ավելի շատ վնասված է բեռնակրող՝ հատկապես հարավային բեռնում, որտեղ գտնվում է հիմնական քայքայված խոռոչը:

- Քանի որ վերնոլորտում օդային հոսանքներն ավելի հակված են դեղի հարավ, այդ դասձառով էլ ֆրեոնները հիմնականում կուտակվում են հարավային բեռնի հասկածում, և դրա արդյունքում այսօր այնտեղ՝ օզոնային շերտում կա մի խոռոչ խոռոչ:

Հայաստանի հանրապետությունը «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությանը միացավ 1999թ. ապրիլի 28-ին: Արդյունքում Գլոբալ էկոլոգիական ֆոնդը 2 մլն 80 հազար դոլար է հատկացրել մեր երկրին՝ «իրազեկման և բարի կամքի համար»: Այդ ֆինանսական միջոցները, ինչպես Գ. Մելքոնյանն է ասում, ուղղվել են նորագույն չափանիշներին համապատասխանող տեխնիկական միջոցների ձեռքբերմանը, որոնցով այսօր երեւանում և Արագածում կատարվում են օզոնային շերտի ստուգումներ:


- Բացի այդ ձեռքբերումներից, նաև ուսուցանվել են օրոջ 700 մասնագետ, ովքեր վերանորոգում են սառնարաններ, օդորակիչներ: Եվ այսուհետ նրանք ոչ թե կարճատև են մթնոլորտ օգտագործված ֆրեոնները, այլ կհավաքեն հասուկ ձևով, կհանեն վերամշակման, և դրանից հետո այդ գազերը մոտից դիտարկելով կլինեն օգտագործման համար, - ասում է Գ. Մելքոնյանը: Ներկայումս աշխարհում յու-

րաքնայնոր պետություն ունի ֆրեոն գազեր արտանետելու իր չափաբաժինը, որը տարեց-տարի կրճատվում է:

- Բնականաբար, անհնար էր կսրուկ դադարեցնել ֆրեոնների օգտագործումը, որը լրջորեն կազդեցրեց նյութերի սենտությունների վրա, - ասում է «Օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինում» ազգային ծրագրի համակարգող Այա Մուրադյանը, - Աշխարհում կա օզոնային շերտը քայքայող 119 տեսակի նյութ: Դրանցից ութը առաջին խմբի, այսինքն՝ առավել օզոնաֆայթայիչ նյութեր են: Հայաստանը ֆրեոններ չի արտադրում, այլ ներմուծում է: Ա. Մուրադյանի խոսքերով՝ Հայաստան ներմուծվում է առաջին կարգի մեկ տեսակի նյութ: Դրա ներմուծումը կդադարի 2010 թ. հունվարի 1-ին: Մնացած նյութերի օգտագործումը կարգվի մինչև 2030 թ.:

Այսպիսով, 1986 թ. համեմատ՝ աշխարհում այժմ օզոն քայքայող նյութերի օգտագործումը կրճատվել է ավելի քան 95 տոկոսով: Մասնագետների հաշվարկներով՝ Մոնրեալի արձանագրության պարտավորությունների լիովին կատարման դեպքում 2065թ. օզոնային շերտը կվերականգնվի մինչև այն մակարդակը, որն ուներ 1986թ.-ից առաջ:

Այս տարի օզոնային շերտի պահպանության միջազգային օրվա կապակցությամբ երեւանում՝ «Տարոն» գեղագիտական կենտրոնում, կազմակերպվեց գրաֆիտի նկարչություն. միջոցառմանը մասնակցեցին երեւանի գեղարվեստի ակադեմիայի գրաֆիտի բաժնի ուսանողները, ովքեր կենտրոնի բակի պատերին նկա-



րեցին օզոնային շերտի պահպանման թեմայով նկարներ: «Օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինում» ազգային ծրագրի համակարգողի օգնական Լիանա Ղահրամանյանը նշում է, որ բացի ման միջոցառումներից՝ պարբերաբար դասընթացներ են անցկացվում նախադպրոցական տարիքի երեխաների, բարձր դասարանցիների, ուսանողների, ուսուցիչների ու գերատեսչությունների աշխատակիցների համար:

Վարդան Ավանեսյան
Զրանտ Գալստյան
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 4-րդ կուրս

Բոլոր ժամանակներում կլիման բնական ճանապարհով փոփոխվել է:

Փոփոխությունների պատճառ կարող էին լինել արտաքին գործոնները՝ հրաբուխների ժայթքումները կամ արեգակից ստացվող էներգիայի տատանումները: Փոփոխություններ կարող էին լինել նաև կլիմայական համակարգի տարբեր բաղադրիչների՝ մթնոլորտի, օվկիանոսների, կենսոլորտի, սառցե ծածկույթի և երկրի մակերեսային մերձին փոխներգործությունների հետևանքով: Այս ներքին փոխներգործությունները կարող են նաև պարբերաբար կրկնվող փոփոխությունների էլ Նիմյո/Հարավային տատանումներն ունենալ կամ կլիմայի առավել պատահական փոփոխությունների պատճառ դառնալ:

Բնական փոփոխությունները հաճախ հանգեցնում են կլիմայական էքստրեմալ երևույթների:

Եղանակային և կլիմայական տատանումներն օրերի, ամիսների, տարիների կտրվածքով կարող են առաջացնել ջերմային ալիքներ, ցրտահարություններ, ջրհեղեղներ, երաշտներ, ձնափոսեր և փոթորիկներ: Կլիմայական էքստրեմալ երևույթները կյանքի կամ երկրի էկոլոգիայի վրա իրենց ունենցած փաստացի ազդեցությունից բացի, համարվում են կլիմայական համակարգի նորմալ վիճակից զգալի շեղումներ: Աշխարհի ցանկացած ռեգիոն ժամանակ առ ժամանակ ենթարկվում է էքստրեմալ երևույթների փորձությունը:

Եթե կլիմայական էքստրեմալ երևույթները բացասաբար են անդրադառնում մարդու բարեկեցության վրա, դրանց անվանում են կլիմայական աղետ: Երկրագնդի որոշ հատվածներում կլիմայական աղետներն այնքան հաճախակի են լինում, որ դրանք կարող են դիտվել որպես նորմա: Աղետներից խոցելիությունն ավելի է մեծանում, երբ մարդիկ

Կլիմայական աղետներ և էքստրեմալ երևույթներ

ստիպված են լինում բնակվել առավել վտանգավոր և սահմանային տարածքներում: Հնարավոր մեծ վտանգի գոտիներում խոցելիության աստիճանը մեծանում է այն պատճառով, որ ստեղծվում են բարձրարժեք ենթակառուցվածքներ:

Տեղումների ինտենսիվության աճը որոշ շրջաններում կարող է մեծ ջրհեղեղների պատճառ դառնալ:

Սպասվում է, որ գլոբալ տաքացման հետևանքով կարագանա հիդրոլոգիական ցիկլը, կավելանա նաև տեղատարափ անձրևների տեսքով տեղումների տոկոսը: Բացի ջրհեղեղներից՝ դրանք կարող են սողանքների, սելավների և հողի էրոզիայի պատճառ դառնալ: Հեղեղների ձեռով տեղացող անձրևները չեն կուտակվում որպես մակահոսքեր՝ ոռոգման և այլ նպատակներով օգտագործելու համար, սակայն դրանք կարող են կուտակվել գետերի ողողատների ջրային հորիզոններում: Որոշ շրջաններում հնարավոր է արեւադարձային ցիկլոնների հզորացում: Այս վտանգն անմիջական սպառնալիք է մարդկանց կյանքին՝ համաճարակների և առողջության համար այլ վտանգների տեսանկյունից, ենթակառուցվածքներին և շինություններին վնասելու, առափնյա էրոզիայի, էկոհամակարգերի կորստի խոթորի և մանգրային անտառների դեգրադացիայի առումով:

Անտառտնտեսությունը և գյուղատնտեսությունն ածխածնի երկօքսիդի, մեթանի և ազոտի ենթօքսիդի խոշոր աղբյուրներն են:

Անտառները պարունակում են հսկայական քանակությամբ ածխածին: Որոշ անտառներ հանդես են գալիս որպես «կանգնեց» օդից կլանելով ածխածին, իսկ այն ան-

տառները, որոնց ածխածնային փոխանակությունը արդեն հաշվեկշռված է, գործում են որպես ածխածնի «կուտակիչներ»: Անտառահատումները և հողօգտագործման մեջ կատարվող փոփոխությունները մոլորակի անտառները վերածում են ածխածնի երկօքսիդի արտանետման աղբյուրի: Ինտենսիվ գյուղատնտեսական գործունեությունից՝ խոշոր եղջերավոր անասունների բուծման, «խոնավ հողերի» բրնձի մշակության և պարտամյութերի օգտագործման հետևանքով արտանետվում է մեթանի մարդածին արտանետումների զգալի մասը և ազոտի ենթօքսիդի մեծ քանակություն: Բարեբախտաբար, ներկայումս առկա են բազմաթիվ միջոցառումներ և տեխնոլոգիաներ, որոնց օգնությամբ կարելի է զգալիորեն կրճատել արտանետումները և անտառներից, և գյուղատնտեսական գործունեությունից, շատ դեպքերում կրճատելով արտադրական ծախսերը, բարձրացնելով բերքատվությունը կամ ստանալով սոցիալ-տնտեսական այլ օգուտներ:

Եթե ուզում ենք, որ անտառներից ածխածնի երկօքսիդի արտանետումները կրճատվեն, անհրաժեշտ է բարելավել անտառների պահպանությունը և կառավարման համակարգը:

Չմայած պահպանության կարգավիճակ ունեցող անտառներն ունեն իրենց որոշակի դերը, այնուամենայնիվ՝ անտառահատումները են պետք է կատարվեն այնպես, որ թուլացվի անտառային հանդակների վրա գործադրվող տնտեսական ճնշումը: Անտառների քայքայումը և դեգրադացիան մեծ մասամբ, կատարվում է գյուղատնտեսական հողահանդակների ընդլայնման և անասունների արածեցման հետևանքով:

Ցանկացած աղետի պատրաստ լինելու համար Ամերիկյան արտակարգ ծառայությունների հրահանգները



Միջազգային փորձ

Դրանք մի քանի պարզ սկզբունքներ են, որոնք կարող են օգնել ձեզ նախապատրաստվելու գրեթե ցանկացած աղետի պատշաճ արձագանքելուն:

Ի՞նչ պետք է անել ԱՒ Ժամանակ առաջին հերթին

1. Պահպանեք հանգստություն: Ցանկացած ԱՒ-ում առաջնակարգ նշանակություն ունի ոչ թե այն, ինչ պետք է անել, այլ այն, ինչ չպետք է անել: Չեզ համար զլխավոր վտանգը թաքցնելն է հենց ձեր հապճեպ, չմտածված գործողությունների մեջ:

Ուստի, ամենից առաջ, պահպանեք հանգստություն: Ի դեպ, հանգստությունն էլ կյանքի եւ մահվան միջեւ սահմանն է: Ուզածդ արտակարգ իրավիճակի ժամանակ սահմանը, որից այն կողմ սկսվում է մահը, այն եզրն է, որից հետո մարդը կորցնում է հոգեկան հավասարակշռությունը եւ սկսում իրեն կործանման համագեցնող չմտածված արարքներ կատարել:

Հաջորդը. կշռադատեք ձեր գործողությունները եւ չմտածված քայլեր մի՛ ձեռնարկեք:

Ավելի լավ է մի փոքր հապաղել եւ հավաքել մտքերը՝ խորհելով սեփական հետագա քայլերի մասին, քան անսպասելի ընկնել գերեզմանատուն:

Իսկ եթե մտորումը ձգձգվում է: Արդյո՞ք հապաղումն այդ դեպքում կործանարար չի լինի: Դա տեղի չի ունենա, եթե դուք վաղորոք ծանոթացել եւ մտապահել եք այս կամ այն արտակարգ իրավիճակում գործելու ընդհանուր կանոնները: Այդպիսի դեպքում ձեզ մտում է միայն ընդհանուր կանոնները հարմարեցնել կոնկրետ իրադրությանը եւ կազմել ԱՒ արձագանքելու ձեր անհատական պլանը:

2. Կազմեք արձագանքելու անհատական պլան: Ավելի լավ կլինի այդպիսի պլան կազմել վաղորոք, չսպասելով, որ արտակարգ իրավիճակն իրականում տեղի ունենա: Ծանոթացեք ձեր մնալու շրջանին, պարզեք, թե ինչ աղետներ, վթարներ են այստեղ կանոնավորապես պատահում, եւ ամենաընդհանուր գծերով կազմեք արտակարգ իրավիճակների պլան: Այդ դեպքում, իրական արտակարգ իրավիճակի ժամանակ, ձեզ մտում է միայն պլանի մեջ չտրվածներ կատարել՝ տվյալ պահի անհրաժեշտությունից չլինելով:

3. Օգտագործեք արտակարգ ծառայությունների հրահանգները: Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ձեր անհատական պլանի հիմք պետք է լինի ոչ միայն ձեր անձնական փորձը (ոմանք կարող է ընդհանրապես չունենան), այլեւ փորձառու մարդկանց խորհուրդները, ովքեր բազմիցս ընդհարվել են տարբեր դժբախտությունների հետ, պայքարել դրանց դեմ: Որպես կանոն, դրանք արտակարգ ծառայությունների աշխատակիցներն են, որոնք մարդկանց մեջ պլակատների եւ պատկերազարդ բրոշյուրների տեսքով տարածում են հրահանգներ, հա-

ձախ էլ ռադիոյով ու հեռուստատեսությամբ հաղորդումներ վարում:

ԱՄՆ-ում տարբեր աղետների դեպքում բնակչության համար հրահանգներ կազմում են FEMA-ն (արտակարգ իրավիճակների դաշնային գործակալություն) եւ առանձին նահանգների համապատասխան գործակալությունները: Ռուսաստանում դրանով զբաղվում են Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը, տեղական ՔՊ եւ ԱԻ, արտակարգ իրավիճակների ռուսաստանյան համակարգի մյուս ստորաբաժանումները: Հայաստանում բնակչության շրջանում այդ խնդիրն իրականացնում են ՀՀ ԱԻ-ը, ճգնաժամային կառավարման ինստիտուտը, ԱԻՎ մարզային ստորաբաժանումները: Մյուս երկրներում, որտեղ դուք, հնարավոր է, մի օր լինեք, նույնպես կան նման գործակալություններ: Աղետներին արձագանքելու ընդհանուր սկզբունքները միասնական են, բայց ամեն մի տարածաշրջան ունի իր առանձնահատկությունը, որը տեղական արտակարգ ծառայություններն ավելի լավ գիտեն:

Ունենդեք նրանց: Աշխատեք նրանցից ստանալ պետքական բուկլետներ եւ ցանկացած այլ ձեռնարկներ: Եթե հիշում եք նրանց հրահանգները՝ ձեր պլանը կկազմվի բնական կերպով, այնպես, ասես միշտ եղել է ձեր գլխում, իսկ վտանգավոր իրավիճակում արագորեն կընդունեք ճիշտ որոշումներ: Չհիշելով կշփոթվեք, դանդաղ կմտածեք, իսկ կգործեք՝ հիմարաբար:

Ի՞նչ պետք է ամփոփի արձագանքման պլանը: Նախ եւ առաջ՝ ինչ չպետք է այն ընդգրկի:

4. Խուսափեք «դոմինոյի» սկզբունքից: Խոսելով պլանի մասին նկատի չունենք բարդ ուրվագծերով ինչ-որ մանրամասն մշակումներ (թեպետ որոշ բաներ ձեզ համար, անկասկած, օգտակար կլինի գրել առանձին թերթիկի վրա): Մանրամասներով հագեցվածությունը հենց այն է, ինչն ունակ է ցանկացած պլանը դարձնելու անիրականանալի: Այսպիսի իրավիճակ նկարագրված է կատակերգական շատ մարտաֆիլմերում. հերոսը կազմել է մանրամասն լավ մշակված պլան, բայց իրադարձությունների զարգացումը շատ մանրամասներ դարձնում է անիրական:

Օրինակ, ինչ-որ պետքական առարկա ջարդվել է, իսկ բազմաթիվ պլանային միջոցառումներ հենց դրանից էին կախված: Այս ֆենոմենը հանրահայտ է եւ անվանվում է «դոմինոյի սկզբունք»։ մեկ ընկած խաղաքարին հաջորդում է բոլոր մյուսների մեկը մյուսի հետեւից քանդվել-թափվելը:

Արտակարգ իրավիճակի ժամանակ չիրականացված պլանների անխուսափելի հետեւանքներն են՝ չհասկանալը, հետո ինչ անել, եւ, որպես վերջնական արդյունք՝ կործանարար շփոթվածությունը: Ուստի մի՛ ջանացեք ամեն ինչ դասավորել ըստ դարակների եւ գրանցել մանրամասներով:

Ձեր պլանում պետք է ամփոփված լինեն ամենաընդհանուր բաները:

- Որտե՞ղ եք պատասպարվելու վտանգի դեպքում:
- Ի՞նչ ուղիով եք տարահանվելու, եթե տեղում մնալ չի կարելի:
- Հետ քաշվելու լրացուցիչ ի՞նչ ուղիներ կան, եթե առաջին ճանապարհը շրջափակված լինի:
- Ինչպե՞ս եք տարահանվելու մեքենայով, հետիոտն, թե այլ կերպ: Ինչպե՞ս կվարվեք, եթե մեքենան անպատեհ պահին փչանա:
- Ի՞նչ իրեր պետք է ունենաք ձեռքի տակ, եթե հարկ լինի պատասպարվելու տանը կամ այլ ապաստարանում:
- Ի՞նչ իրեր կվերցնեք ձեզ հետ տարահանվելիս:

Այս վեց կետերը, որպես կանոն, բավական են անհրաժեշտ գործողությունների մասին պատկերացում ունենալու եւ անհրաժեշտ իրերի լրակազմ (կոմպլեկտ) պատրաստելու համար:

5. Նախապատրաստեք առաջին անհրաժեշտության լրակազմ (ավելի լավ է՝ երկու լրակազմ):

Ցանկացած արտակարգ իրավիճակի համար պետք է կազմել եւ առանձին անջրանցիկ պայուսակում, մատչելի տեղում պահել առաջին անհրաժեշտության լրակազմ (կոմպլեկտ):

Այն պարունակում է հետեւյալ իրերը.

- առաջին օգնության դեղարկղիկ,
- պահածոյացված մթերք բանկաներում եւ խմելու ջուր պլաստիկ շշերի մեջ (կարելի է նաեւ մեկական փաթեթ սուրճ, թեյ, աղ),
- տրանզիստորային ռադիո-ընդունիչ եւ էլեկտրական լապտերիկ,
- պահեստային մարտկոցներ ռադիոընդունիչի եւ լապտերիկի համար,
- հերմետիկ տուփի մեջ լուցկի, գազայրիչ, թուղթ՝ խարույկ վառելու համար,
- գործիքներ եւ ճաշի պիտույքներ՝ ծալովի դանակ, գոպուներ, պատառաքաղներ, երկու-երեք խոր ափսե եւ գավաթներ, պահածոների բացիչ, տուրիստական թեթե կացին,
- ընտանիքի անդամների կողմից բժշկական ցուցումներով կանոնավորապես օգտագործվող դեղեր (եթե հրահանգը չի պահանջում դրանք սառնարանում պահել):

Եվս մեկ պայուսակ այդպիսի լրակազմով վատ չի լինի պահել ավտոմեքենայի բեռնախցիկում:

Ընտանեկան փաստաթղթերն ու փողը չպետք է դնել որտեղ պատահի, այլ հարկավոր է պահել որոշակի, ձեզ համար դյուրամատչելի տեղում: Այդ դեպքում անհրաժեշտ պահին դրանք արագ կգտնվեն առաջին անհրաժեշտության ձեր լրակազմի մեջ:

Նույնը վերաբերում է այն դեղերին, որոնք ընտանիքի որոշ անդամներ ստիպված են ընդունելու կանոնավորապես, բայց դրանք պետք է սառնարանում



պահել: Սառնարանում դեղերը պիտի դրվեն առանձին տուփի մեջ, որպեսզի կարողանաք անմիջապես այն վերցնել եւ դնել առաջին անհրաժեշտության ձեր լրակազմի մեջ:

Այս լրակազմին կարելի է ավելացնել երթային փոքրիկ կաթսա, նավթավառ կամ սպիրտայրոց՝ դաշտային պայմաններում ուտելիքը տաքացնելու համար, նաեւ թերմոս: Բայց ավելի լավ է դրանք պահել այլ, առանձին պայուսակում:

Այլ առարկաներ

- Որոշեք, թե արտակարգ իրավիճակի դեպքում ինչ հագուստ կարող է ձեզ պետք գալ եւ նախապատրաստեք հագուստի ու կոշիկի լրակազմ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար. անջրանցիկ հագուստ եւ ամառային ու ձմեռային կոշիկներ: Հետեւեք, որ կոշիկը փափուկ ներբաններով չլինի, հնարավոր է ստիպված լինեք ոտքով երկար քայլելու, իսկ փափուկ ներբաններով կոշիկներով շատ ճանապարհ չեք անցնի՝ առանց ոտքերն արյունվա անելու:
- Վատ չէ ունենալ վրան եւ քնապարկեր: Ավելի լավ է դրանք այնպես փաթեթավորել, որ միշտ պատրաստ լինեն տեղափոխելու:
- Եթե տեղական արտակարգ ծառայությունների հրահանգներում կան առաջարկություններ առանձնահատուկ արտակարգ իրավիճակների դեպքում լրացուցիչ ինչ-որ առարկաներ ունենալու մասին, ապա հետեւեք այդ հանձնարարականներին:

6. Ոչ մի ավելորդ բան մի՛ վերցրեք: Տարահանվելիս ինչպիսի իրեր էլ պլանավորեք ձեզ հետ վերցնել, կիսմոզվեք, որ դրանք ճիշտ այնքան են, որքան կկարողանաք տանել ձեր մեքենայով, եւ դրանից ոչ ավելի: Նույնիսկ, եթե պլանավորել եք ավտոմեքենայով մեկնել, ապա չի բացառվում ճանապարհին նրա խափանվելը, եւ այդ դեպքում ստիպված կլինեք ճանապարհը շարունակել ոտքով:

Առաջին անհրաժեշտության լրակազմի մեջ մտնող իրերը պետք է անպայման ձեզ հետ վերցնեք: Այդ լրակազմը պետք է լինի առանձին անջրանցիկ պայուսակի մեջ, ընդ որում՝ արտաքնապես տարբերվի մյուսներից, իսկ ավելի լավ է՝ վրան որեւէ հատուկ վառ մեջք չունի ամրացված: Իսկ նրա մեջ չմտնող իրերը տեղավորեք ուրիշ պայուսակներում: Չէ՞ որ կարող է ճանապարհին ուղեբեռի մի մասը, իսկ միգրացի եւ ավելորդ համարված ամբողջ բեռը նետելու ցավալի անհրաժեշտություն ծագի, այն էլ՝ առանց

ավելորդ մտորումների ու նոր լուծումներ որոնելու: Նախօրոք որոշեք, թե առաջին անհրաժեշտության լրակազմի մեջ չմտնող իրերից որոնք հարկ կլինի թողնել բեռնախցիկում, եթե ավտոմեքենան խափանվի ճանապարհին, եւ որոնք՝ հնարավոր է, ստիպված կլինեք զգել հետո՝ իրադարձությունների խիստ անբարենպաստ զարգացման դեպքում:

Այդուհանդերձ հիշեք. ավելի լավ է ձեզ հետ վերցնեք շատ ուտելիք, ջուր եւ դեղամիջոցներ, առաջին անհրաժեշտության երկու-երեք լրակազմ, քան քարշ տաք անպետք բաներ, որոնք կարիքը չեք զգալու արտակարգ պայմաններում:

7. Վաղորդեք պատրաստեք տեղ այն թանկարժեք իրերն ու նվիրական մատուցներն արագ հավաքելու եւ պահելու համար, որոնք տարահանվելու դեպքում թողնում եք տանը: Ասե՛ք, տանն այնպիսի իրեր կան, որոնք տիրոջ համար մեծ արժեք են, օրինակ, ընտանեկան մատուցները, սակայն տարահանվելիս դրանցով ծանրաբեռնվելն անմտություն կլինի: Ինչպե՞ս վարվել:

Հարկավոր է ձեռք բերել հերմետիկ տարա (արկղ, պարկ, փաթեթ), որպեսզի հնարավորություն ունենալ այդպիսի առարկաները թողնել դրա մեջ, իսկ հետո հուսալով, որ ձեր բացակայության ժամանակ այդ իրերը կդիմանան աղետին: Սակայն արտակարգ իրավիճակներում մարդկանց հաշմվելու եւ զոհվելու անմիջական պատճառ են լինում գերազանցապես գույքի հետ քաշքշուկները, այն դեպքում, երբ իրադրությունը պահանջում է շուտափույթ տարահանում: Ամենաողջամիտ որոշումն է վերցնել միայն առաջին անհրաժեշտության առարկաները, իսկ մնացածի մասին մոռանալ:

Շատ ընտանիքներում պահվում են այնպիսի առարկաներ, որոնք հիրավի մատուցներ են եւ դրանց ոչնչանալը ընտանիքի համար աղետ կլինի: Բայց, որպես կանոն, այդ իրերը պահվում են պահարաններում եւ այդտեղից հանվում են հազվադեպ՝ հիսմալու համար: Եթե լրջորեն վախենում եք որեւէ աղետից դրանց ոչնչանալու համար, ապա ավելի լավ է այդ իրերը պահարանում պահելու փոխարեն դնել հերմետիկ մետաղյա արկղի մեջ: Եթե գյուղական վայրում եք ապրում, ապա խորհուրդ է տրվում արկղը դնել նկուղում. արտակարգ իրավիճակների ժամանակ դա նրա պաշտպանված լինելու ամենահուսալի տեղն է:



Օգնի՛ր փուժածին

Իրավիճակ

Ինսուլյար (արյան զեղում ուղեղում)

Գիտակցության կորուստ: Արտի աշխատանքի եւ շնչառության խախտում: Փսխում: Ակամա արտաթորում: Խնծորակների տեղի եւ բերքի չափերի փոփոխություն, դեմքի մկանների կաթված: Կլլման անկարողություն: Կաթված, խոսքի եւ զգայնության խանգարում:

Ձեր գործողությունները



- Ինսուլյարի նշանների հի հայտ գալուն պես անհապաղ խնդրեք Շտապօգնություն կանչել, հիվանդին հարմար պառկեցրեք մահճակալին՝ մեջքի վրա, քանդեք հագուստի կոճակները եւ ապահովեք թարմ օդի հոսք: Գլխավորը լիարժեք հանգիստն է: Բերանից անպայման հանեք ատամների պրոթեզները:
- Ընդհատվող շնչառության դեպքում հիվանդին թեքեք կողքի՝ պարբերաբար հեռացնելով քթում պանուս կուտակված լորձը: Անհրաժեշտ է հետեւել լեզվին, քանի որ հնարավոր է, որ այն «կուլ գնա»:
- Ուղեղում արնագեղում կասկածելու դեպքում գլուխը պետք է բարձրացնել եւ սառույց դնել, իսկ ոտքերին՝ ջերմակ:

- Իշեմիկ ինսուլյարի դեպքում գլուխը շատ բարձր չպետք է լինի, գլխին սառույց եւ ոտքերին ջերմակ տեղադրել պետք չէ:
- Արյան բարձր ճնշմամբ ուղեկցվող ուղեղի արյան շրջանառության դիսբալանսի խանգարումներ ունեցող հիվանդներին օգակար է մանանեխի կաշաններ դնել ծոծրակին եւ թիկունքին:
- Եթե ինսուլյար տեղի է ունեցել փողոցում, աշխատավայրում կամ հասարակական վայրում, անհապաղ պետք է դեպքի վայր կանչել մասնագիտացված նյարդաբանական բրիգադ, իսկ դրա բացակայության դեպքում՝ Շտապօգնություն:

Իրավիճակ

Ձեզ շուն է կծել

Ձեր գործողությունները

- Մի փորձեք անմիջապես կանգնեցնել արյունը (արյունահոսությունը նպաստում է, որ շան թուրք դուրս գա վերքից): Փորձեք հասնել մոտակա տանը եւ օգնություն կանչել: Եթե հնարավորություն կա, վերքը



Իրավիճակ

- Մի քանի անգամ յոդով, մանգանակալիական լուծույթով ախտահանեք մաշ-

կը՝ կծած վերքի շուրջ: Փորձեք անմիջապես դիմել մոտակա բուժկետ կամ հիվանդանոց՝ կատարողությամբ վարակվելու վտանգից խուսափելու համար: Եթե ձեզ հայտնի են շան տիրոջ տվյալներն ու հասցեն, փոխանցեք դրանք բժշկին:

Իրավիճակ

Տրավմատիկ շոկ

Դեմքի մոխրագույն երանգ, արգելակվածություն, ցածր արյան ճնշում, հաճախ եւ թույլ անոթազարկ, կաշուն սառը քրտինք:


Ձեր գործողությունները

- Անհապաղ ահազանգեք Շտապօգնություն: Աշխատ-



- տեք վերացնել շոկ առաջացնող պատճառը (արյունահոսություն, սուր ցավ, շնչառության խանգարում):
- Պառկեցրեք տուժածին, տաքացրեք նրան (որեւէ տաք բան գցեք վրան, կողքերին ջերմակներ դրեք): Որովայնի շրջանում վնասվածքների բացակայության դեպքում տվեք տաք հեղուկներ, 50 գրամ օդի: Թույլ մի տվեք շարժվել մինչեւ բժշկի ժամանելը՝ նույնիսկ վիճակի լավացման դեպքում: շոկային վիճակից դուրս բերել կարող է միայն բժիշկը:
- Եթե արյունահոսությունը

դադարեցնելու համար լարան է տեղադրած, մի հանեք այն մինչեւ բժշկի ժամանելը, որովհետեւ կխթանվի արյան մեջ թունավոր նյութերի ներհոսքը: Տուժածին տեղափոխելիս ոտքերը բարձրացրեք գլխից վերեւ:



Իրավիճակ

Մարմնի, ձեռքերի, ոտնաթաթի կորուստ

Կտրված վերջույթների ռեպլանտացիան (կտրված վերջույթների վերատեղադրումը) հնարավոր է 12, որոշ դեպքերում՝ 20 ժամվա ընթացքում՝ տրավմատիկ անդամահատումից հետո:



Ձեր գործողությունները

- Օգնության կանչելով հարեւաններին, անցորդներին՝ խնդրեք արագ Շտապօգնություն կանչել կամ կանգնեցրեք առաջին օգնության դեպքում տեղում մշակեք վերքը (ծիգ վիրակապ դրեք կտրված հատվածի վրա, ուժեղ արյունահոսության դեպքում վերքից քիչ վերեւ լարան դրեք: Անպայման գրի առեք լարանը դնելու ժամը, եւ թղթի վրա գրելով, տեղադրեք լարանի տակ): Վերջույթը բարձրացրեք վեր:
- Մարմնի կտրված հատվածը փաթաթեք ստերիլ (կամ պարզապես մաքուր) կտորի մեջ, այն դրեք պլիսթիկեմի տոպրակի մեջ եւ կապեք: Այդ փաթեթը դրեք մեկ ուրիշ՝ սառույցով տոպրակի կամ էլ մաքուր սառը ջրով տարայի մեջ, որն անընդհատ պետք է պահել



կախված վիճակում: Նշեք պատահարի ժամն ու երկտողը կցեք փաթեթին:

- Օգտագործեք բոլոր հնարավոր միջոցները՝ տուժածին պառկած վիճակում եւ նրա մարմնի կտրված հատվածը հիվանդանոց հասցնելու համար:

Կտրված վերջույթը չի կարելի

- Դեմքի ձյան, սառույցի վրա կամ սառնարանի խցիկում, քանի որ հյուսվածքները կարող են ցրտահարվել:
- Լվանալ ջրով կամ որեւէ լուծույթով:
- Տոպրակի մեջ դրած տեղադրել որեւէ մակերեսի վրա, քանի որ հյուսվածքները կարող են այտուցվել:

Մարդու մաշկը տարիքի հետ կորցնում է իր պաշտպանական ֆունկցիաները: Բժիշկներն այսօր փորձում են պարզել այդ անդամալի փոփոխությունների պատճառներն ու մեխանիզմը:

Լոնդոնի համալսարանի բժիշկների մի խումբ կամավորների օրինակով ապացուցել է, որ մաշկի կայունությունը վնասվածքների հանդեպ պայմանավորված է դրա պաշտպանական մեխանիզմների մոբիլիզացիայի եւ արտաքին ազդեցիկ գործոնների ազդեցության խլացման ունակությամբ:

- *Sartցներն անդամալներն են դառնում սարսեասկ վարակների հանդեպ, եւ հիմա մենք գտել ենք դրա դաժնաբանը, - ասում է որոշեալ Արնե Արբերը՝ այս հետազոտության հեղինակը: Նրա խոսքերով, այս խնդրի արմատներին հասնելը բավական դժվար է: Անհրաժեշտ է հսկակ հասկանալ, թե ինչն է դառնում ծերացման դաժնաբան, իսկ ինչը՝ հիվանդություններ առաջացնում:*

Մենք ցանկանում էինք բացահայտել առողջ արտաքին աղբ-

Մաշկի փարիքը որոշում է իմունիտետը

յուրը, հասկանալ, թե ինչու ծեր մարդկանց մաշկը չի կարողանում դաժնաբան վարակների դեմ այնպես, ինչպես երիտասարդներին, - նշում է պրոֆեսորը:

Իմունիտետի բջիջներ

T-լիմֆոցիտներ կամ T-բջիջներ-լիմֆոցիտներ, որոնք գարգանում են կաթնասունների մոտ՝ կարմիր ոսկրածուծի նախորդ բջիջներից: Դրանք լուրջ դեր են կատարում իմունիտետի ամրացման գործում, ճանաչում եւ ոչնչացնում են օտարածին հակազները:

Նախկինում բժիշկները կարծում էին, որ մարդկանց իմունիտետը թուլանում է, քանի որ տարիքի հետ այն, այսպես ասած, «մաշվում է»: Այդ պատճառով էլ մեծահասակները դժվար են դիմագրավում վարակների ու հիվանդություններին: Մինչեւ վերջերս մասնագետները կարծում էին, որ մաշկի պաշտպանական ֆունկցիաների նվազումը կապված է էլեկտրոնների՝



մասնավորապես T-լիմֆոցիտների, թաքնված թերությունների հետ, որոնք պատասխանատու են վարակի ճանաչման ու վերացման համար: Սակայն, երբ վերջերս էին 70-ից բարձր եւ 40-ից ցածր առողջ մարդկանց մաշկի նմուշներ, պարզվել է, որ մեծահասակների մոտ T-լիմֆոցիտների ոչ մի թերություն էլ

չկա: Դրա փոխարեն փորձագետները հայտնաբերել են մաշկի եւ իմունային համակարգի հետադարձ կապի խախտում՝ անհրաժեշտության դեպքում պաշտպանական ֆունկցիայի իրականացման համար T-բջիջների ներգրավման անկարողություն:

- *Չարցն այս սեսանկյունից գնահատելը ստիպում է մտածել՝ մաշկն է արդյոք մարդու մյուս հյուսվածքների ծերացումը մեր նկարագրածին: Օրինակ, միզուցե, թոփի հյուսվածքը նույնպես չի կարողանում ազդանշան ուղարկել T-բջիջներին: Դա կարող է բացատրել ավագ սերնդի մոտ թոփի ֆաղկեղի, ցնչառական օրգանների վարակների դեմքերի մեծ թիվը, - նշում է պրոֆեսոր Արբերը, - Մենք դեմք է դարձնում, թե ուրեմն էլ իրատեսական մեծահասակների մոտ մաշկի լրիվ վերականգնման հավանականությունը: Մեր փորձերից մի ֆանիսը ցույց են տալիս, որ, համեմայն դեմք փորձանոթում, կարելի է ստիպել, որ ծեր մարդու մաշկը*

համադասախան ազդանշաններն են՝ T-բջիջներին գրավելու համար: Մենք կարծում ենք, որ վնասվածքները լրիվ կարող են վերականգնվել: Մնում է դարձել, թե հասկալուս ինչ ազդանշան է անհրաժեշտ T-լիմֆոցիտներն ակտիվացնելու համար: Այդ ժամանակ մենք ծերերին կվերադարձնենք մաշկի առողջությունը, - կարծում է հեղինակը:

Կենսատեխնոլոգիաների եւ կենսաբանության հետազոտությունների խորհրդի ղեկավարի տեղակալ Սթիվ Վիսշերն ասում է.

- *Մենք ավելի ու ավելի երկար ենք ապրում, բայց կարելու է, որ երկար կյանքը չուղեկցվի հիվանդություններով: Այն, ինչ նկարագրել են դրոշմաբան Արբերն ու նրա գործընկերները, ծերացման բնական գործընթացն է: Այն սարքեր հիվանդությունների զարգացման հիմք է ստեղծում, ինչը մեծադեպ ազդում է մեծահասակների կյանքի որակի վրա: Ինչքան մենք ցանկանում ենք ծերացման գործընթացի մասին, այնքան ավելի արդյունավետ կկարողանանք կանխարգելել եւ բուժել սարխային հիվանդությունները:*



Հանճարն ունի իր ախտանիշները

Վերջին տասնամյակներում բժիշկները սկսել են առանձնացնել աուտիզմի մի հատուկ տեսակ: Դրա կրողների մոտ սոցիալական հմտությունները չեն զարգանում, սակայն նրանց ինտելեկտուալ հնարավորություններն ապշեցուցիչ են: Տարօրինակ հանճարների համար նույնիսկ սինդրոմ հորինեցին՝ Ասպերգերի: Մի բան միայն պարզ չէ՝ հիվանդությունը միայն հանճարների՞ն է կաչում, թե ինքն է բարձր IQ-ի պատճառը:

2001-2002 թվականներին բրիտանացի հակեր Հարի Մաքքինոն «կոտրեց» Պենտագոնի եւ ՆԱՍԱ-ի գրեթե հարյուր համակարգիչ: Նրա «քիբեր» հանցագործությունը համաշխարհային պատմության մեջ համարվում է ամենախոշորը: ԱՄՆ-ը պահանջում է հանձնել հանցագործին, որին նրանք հեռակա դատապարտել են 60 տարվա ազատազրկման: Բայց բրիտանական դատարաններն արդեն մի քանի տարի է՝ չեն կարողանում որոշել, թե որքանով է բարոյական էքստրադիցիայի ենթարկել հոգեկան հիվանդությանը տառապող հակերին:

Համակարգչային հանճարեղ մասնագետի մոտ Ասպերգերի սինդրոմը, այսպես կոչված, բարձրաֆունկցիոնալ աուտիզմի տեսակներից մեկն է, որի ժամանակ հիվանդը կաշուն հետաքրքրություններ ունի, բայց չի գիտակցում իր արարքների սոցիալական եւ իրավական հետեւանքները: Այս տիպի աուտիզմով տառապողները, որպես կանոն, ունենում են բարձր կամ նորմալ ինտելեկտ, բայց սոցիալական հարմարվողականությունը թույլ է:

Ասպերգերի «ասպինները»

Ասպերգերի սինդրոմով տառապողների շարքում են տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակակիր Վերոնոն Սմիթը, դերասանուհի Դերիլ

Հաննան, ռեժիսոր Սթիվեն Սփիլբերգը: Որոշ աղբյուրներ պնդում են, որ «Մայքրոսոֆթի» հիմնադիր Բիլլ Գեյթսը նույնպես «ասպի» է: Կարծիք կա, որ այնպիսի հայտնի դեմքեր, ինչպիսիք են Իսահակ Նյուտոնը, Վոլֆգանգ Ամադեյ Մոցարտը, Լյուիս Բերոլդ, Վինսենտ վան Գոգը, Չարլզ Դարվինն ու Ալբերտ Էյնշտեյնը նույնպես տառապել են այս հիվանդությամբ:

Մաքքինոնը մանկուց հետաքրքրվում էր այլմոլորակայիններով: 200-ների հանդեպ անառողջ հետաքրքրությունն էլ հակերին դրդել էր հանցագործության: Պենտագոնի ու ՆԱՍԱ-ի համակարգչային բազաներում նա հույս ուներ տեղեկություններ գտնել այլ քաղաքակրթությունների հետ շփումների մասին: Մաքքինոնի գործը հասարակության առջեւ բարոյաէթիկական խնդիր է դրել: Մի կողմից, եթե նա կարողացել է շրջանցել աշխարհի ամենապաշտպանված համակարգիչները, որոնց ամփոփագության համակարգերը հարյուր հազարավոր դոլարներ արժեն, նրան դժվար է ամենդուրեւ համարել: Մյուս կողմից էլ՝ հակերի մոտիվացիան հանցավոր չէր եւ պայմանավորված էր նրա հիվանդությամբ:


«Չոր» հանճարը

Ասպերգերի սինդրոմը համարում են աուտիզմի սպեկտրի խանգարում: Այս ախտորոշումը

որոշվել է համեմատաբար վերջերս՝ 1992 թվականին: Այդ պահից հիվանդությանը տառապողների թիվը շարունակում է աճել: Հիվանդության առաջացման պատճառը չի հաջողվում պարզել: Հնարավոր է, որ դա քաղաքակրթության նոր հիվանդություն է, թվանշանային դարի հիվանդությունը: Հետաքրքիրն այն է, որ այս հիվանդների ինտելեկտուալ զարգացումը ոչ միայն չի կաղում, այլև միջինից բարձր է: Նրանք լավ մաթեմատիկոսներ ու ծրագրավորողներ են դառնում: Բացի բարձր IQ-ից, հիվանդները նաեւ ֆենոմենալ հիշողություն ունեն:

Ինչպես ճանաչել հիվանդությունը

Մարդը տառապում է Ասպերգերի սինդրոմով, եթե. 1. մարդկանց հետ շփվում է բացառապես իր կարիքներից ելնելով, 2. միակողմանի է շփվում իր հասակակիցների հետ (երեխա), 3. չփվել չի կարողանում կամ չփվում է դժվարությամբ, 4. չի ընկալում ուրիշների զգացմունքները: Որոշ մասնագետների կարծիքով, բավարար է նույնիսկ մեկ չափանիշ, որպեսզի մարդը հիվանդ համարվի: Սինդրոմի ամենաբարդ դեպքերը վերաբերում են սոցիալական հարաբերություններին: Ինչպես աուտիզմի այլ ձևերի ժամանակ, այստեղ նույնպես հիվանդները ցուցաբերում են զգացմունքային աղքատություն, նրանց չեն հետաքրքրում ուրիշների զգացմունքները: Նրանք ինքնամոտիվ են, դժկամությամբ են ընկերանում, իսկ ընկերություն անում են «վատ»՝ ըստ ընդունված նորմերի: Նույնիսկ մտերիմ մարդկանց հետ շփումները դժվարությամբ են տրվում: Այսպիսի հիվանդների մտերիմների համար այնքան էլ հեշտ չէ. «ասպինների» հետ շփում հաս-



տատելն ամենօրյա դժվարին աշխատանք է: Հիվանդի շուրջ ցանկացած սոցիալական ակտիվություն արագ հոգնեցնում է նրան: Առողջ մարդկանց հետ շփվելիս նրանք հաճախ չեն կարողանում կենտրոնանալ՝ չեն ընկալում միմիկաների ու ժեստերի իմաստային ծանրաբեռնվածությունը: Ընկալվում են միայն բառերը, այն էլ՝ բառացիորեն, առանց շեշտադրական կամ համատեքստային նրբությունների: Իսկ ահա ինտերնետը նրանց շփումների լայն հնարավորություն է տալիս: Գրելու միջոցով նրանք բավական ազատ են շփվում, ինչով էլ բացատրվում է հատուկ այս սինդրոմով տառապողների համար բազմաթիվ ինտերնետային ֆորումների առկայությունը:

Վիճակագրություն

Շվեդ հոգեբան Լարս Քրիստոֆեր Գիլբերգը գրել է, որ հիվանդության ախտանիշներն առկա են դպրոցական տարիքի

300-400 երեխաներից մեկի մոտ: Կանադայում հիվանդ է 500-ից մեկը:

Բժշկական գիտությունների ռուսական ակադեմիայի հոգեկան առողջության կենտրոնը Ասպերգերի ավելի ցածր տոկոս է նշում՝ 0,01%:

Նույն տվյալներով՝ մեկ հիվանդ կնոջն ընկնում է ինը հիվանդ տղամարդ: Ռուսական տվյալները նույնպես ցույց են տալիս, որ Ասպերգերի սինդրոմը, իրոք, հաճախ ուղեկցում է հանճարեղությանը: Այսպես, Սիլիկոնային հովտում այս սինդրոմով երեխաներն ավելի հաճախ են հանդիպում, քան ամբողջ ԱՄՆ-ում:

Մաքքինոնի գործը միակը չէ, երբ մեղադրանք է առաջադրվում Ասպերգերի սինդրոմով հիվանդ հակերի: Այս տարի ԱՄՆ-ում դատարանն արդարացրել է «ասպի» Վիկտոր Բերկովիչին, ով ինտերնետի միջոցով գողացել էր 500 հազար դոլար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

• համակարգիչի եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշխատակազմ (ք. Երևան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական

գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք նաեւ գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակրչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: ՀՀ քաղաքացիները մրցույ-

թին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, մի արական սեռի անձինք՝ նաեւ գինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակրչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 09.10.2009 թ.:

Մրցութային մասնակցելու ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երևան, Պուշկինի 25, հեռ. 53-07-87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութային մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. Պետական հրդեհային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Վայոց-Ձորի մարզային հրդեհային տեսչության (այսուհետ՝ Վայոց-Ձորի տեսչություն) հրդեհների հաշվառման, վերլուծության եւ հակահրդեհային քարոզչության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 34/1-4.2-43)

Մասնակցում է հրդեհների հաշվառման, վերլուծության աշխատանքներին եւ հակահրդեհային քարոզչությանը: Սահմանված կարգով մասնակցում է Բաժնի ներկայացվող տեղեկությունների վերլուծություններին:

Ներկայացնում է առաջարկություններ հրդեհների հաշվառման, վերլուծության եւ հակահրդեհային քարոզչության ոլորտին վերաբերող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 28.10.2009թ. ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երևան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- Այս կետերում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապ-

